


ԳՐԻԳՈՐ
ՆԱՐԵԿԱՅԻ



ԱՂՇՐ



Գրիգոր Նարեկացի



Երևան 2018

Սուրբ Գրիգոր Նարեկացու միջոցով մենք մոտենում ենք Աստծուն:
Ներշնչման աղբյուր են իր «Տաղեր»-ը, որոնցում սուրբի լուսավոր ոգու
շողարձակող լարերը սպեղանիներ են դառնում ամեն հայի հոգում:

«Նարեկացի» արվեստի միութան հիմնադիր՝
Նարեկ Հարությունյան

«Նարեկացի» արվեստի միութան հրատարակած գրքերի, արվեստի
տարբեր ճյուղերը ներկայացնող ստեղծագործությունների գանձարանը
հարստացավ ևս մի գլուխգործոցով՝ սուրբ Գրիգոր Նարեկացու տաղերի
և շարականի հրատարակությամբ:

Փոքրիկ այս գրքուկում ներառված են Գրիգոր Նարեկացու այն վեց տա-
ղերը և միակ շարականը, որոնց մեղեդին, մշտապես երգվելով, դարերի
խորքից հասել է մեզ: Տաղերը ներկայացված են գրաբար և աշխարհա-
բար՝ բացառությամբ շարականի և «Տաղ Սուրբ Խաչին» (Հաւիկ) տաղի:
Վերջինիս թարգմանության բացակայությունը, հավանաբար, Նարեկա-
ցու գրչին պատկանելու հարցի վիճելիությունն է:

Գրքուկում գետեղված են տաղերի և շարականի նոտաներն, և ձայնասկա-
վառակը՝ Գևորգ Հունանյանի և Աննա Մայիլյանի անգուղական կատա-
րումներով: Երգերի բազմաձայնումը՝ Դանիել Երաժիշտի:



©«Նարեկացի» արվեստի միություն, 2018



Միակ հանճարը, որ կարողացավ
 Ամենապարզը դարձնել խոր-խորհուրդ....
 Եվ այդ բերքի մեջ, մեզ համար սփռված,
 Մենք հանց մեղուներ, իր ոսկեփոշուց
 Նեկտար ենք քաղում:

Բալմոստ

Նարեկացու երգարվեստը

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը հայ միջնադարյան հոգևոր երաժշտությունը բնորոշել է իբրև «Սուրբ Յոզով շաղախված»: Այդպիսին են նաև Նարեկացու երգերը:

«Մատեան ողբերգութեան» պոեմից 12 աղոթք ներմուծվել են «Պատարագամատոյց», «ժամագիրք» և «Աղօթագիրք». ըստ Ն. Թահմիզյանի կազմած ցանկի՝ թիվ 18, 41, 89 գլուխներն ամբողջությամբ, իսկ 8, 12, 23, 31, 35, 80, 84, 91, 93 գլուխները՝ հատվածաբար (1, էջ 80): «Փառք Զրիստոսի ամենագորյարութեանն» շարականը, «Աչքն ծով ի ծով», «Հաւուն, հաւուն» տաղերը Ն. Թաշճյանը զետեղել է ձայնագրյալ ժամագրքում, Շարակնոցում և Պատարագում, ընդ որում՝ «Հաւուն, հաւունը» սկսվում է 2-րդ տողից՝ «Դիտելով զհեթանոսս...»:

Հետևյալ փաստերը վկայում են Նարեկացու արվեստի աստվածային ծագումը՝ Ներսես Շնորհալին ցուցում է թողել, որ իր մի երգը կատարեն Նարեկացու տաղի մեղեդիով, իսկ Ն. Թահմիզյանը բացահայտել է «Ընկալ քաղցրությամբ» և Ն. Շնորհալու «Աշխարհ ամենայն» երգի ընդհանուր եզրերը (2, էջ 103): Այդ ազդեցությունը ուժի մեջ է և այսօր: Ահավասիկ՝ «Մատենակի» 3-րդ գլխի հիման վրա գրված (1985 թվականին) «Խմբերգային կոնցերտի» հեղինակ Ալֆրեդ Շնիտկեի խոստովանությունը՝ «Բանաստեղծական տեքստը թելադրել է երաժշտության բնույթը, ծնելով անհրաժեշտ հնչերանգ, որը բխում էր խոսքի արտասանությունից, ստեղծում հուզական լիցք և հոգևոր մթնոլորտ... Ես գրեցի այն երաժշտությունը, որը կյանքի է կոչել այդ տեքստը, այլ ոչ այն, որը ցանկանում էի» (2, էջ 237-238): Նույնը կարող էր ասել Էդգար Յովհաննիսյանը՝ իր «Մատենանոցի» օրատորիայի վերաբերյալ: Նարեկացու ավետաբեր «Հաւիկ», «Հաւուն» և մյուս տաղերը Նոյյան աղավնու պես, կտրել անցել են «կենցաղոյս ծովի ալեբախումները»՝ դարերի արհավիրքները և հասել մեզ՝ շնորհիվ երգիչների սերնդափոխության: Դրանք գրի են առնվել խագերով, Զ. Լիմոնջյանի նոտագրությամբ: Եվրոպական նոտագրության են վերածել Կոմիտասը, Մ. Աղայանը, Ռ. Աթայանը, Ն. Թահմիզյանը... Դասական են համարվում Կոմիտասի գրառումները՝ «Հաւուն, հաւուն», «Հաւիկ» (երեք տարբերակ), «Ահեղ ձայնս», «Սայլն» տաղերը և վերջինիս առնչվող

«Փառք Զրիստոսի ամենազօր յարութեանն» շարականը, իսկ «Աչքն ծով ի ծով»-ը՝ Ն. Թաշճյանի նոտագրությամբ: Կոմիտասը նույնպիսի ակնածանքով էր բյուրեղացնում և բազմաձայնում միջնադարյան շարականները, տաղերը, գանձերը, ինչպես Բախը՝ յուրերջյան խորալները, որոնք հետագայում պիտի դառնային նորանոր ստեղծագործությունների «ներքին այրման շարժիչը»: Ըստ Ն. Թահմիզյանի՝ «Նարեկացու տաղերը մի կողմից առնչվում են Տերունական տոների հետ, մյուս կողմից՝ «Մատենաի», որի ալեկոծությունից հետո հանգստացնում և հաշտեցնում են արտաքին աշխարհի հետ» (2, էջ 88): Երաժշտագետը «Մատենանը» բնորոշում է իբրև հեղինակի մի հայացք, որը մխրճվում է Նարեկացու ներաշխարհը, իսկ տաղերը, «որ հակադրության յուրահատուկ սկզբունքով» կապված են «Մատենաի» հետ՝ հայացք դեպի արտաքին աշխարհը, բնությունը և մարդը»: Այս բևեռները հիշեցնում են Բեթհովենի բուռն, «ճակատագրական» 5-րդ սիմֆոնիան և հովվերգականը՝ 6-րդը, որոնք ստեղծվել են նույն 1808 թվականին, երբ Բեթհովենը փոթորկվում էր հակասական զգացմունքներով: Նարեկացու մեղեդիները հիմնականում երկու տեսակի են՝ այսպես ասած «մասիսաձև», որի հնչյունները գծագրում են Արարատի ուրվագիծը, մյուսը գահավիժում է գագաթից և հետզհետե հանգչում ստորոտում:

Ըստ Ն. Թահմիզյանի՝ Նարեկացու գրչին են պատկանում նաև հինգ երգվող տաղերի մեղեդիները: Սակայն կա կարծիք, որ նա հորինել է նաև իր «Վարդավառին» տաղի մեղեդին: Մանավանդ, որ տաղի մեղեդին իր գեղեցկությամբ արժանի է մյուսների կողքին դասվելու:



«Փառք Քրիստոսի ամենազօր յարութեանն» շարականը

Ն.Թահմիզյանը մանրամասն գրում է, թե ինչպես է Մ. Աբեղյանը հայտնաբերել Նարեկացու միակ շարականը: Պարզվում է, որ այն հաջորդում էր «Սայլն» տաղին: Ըստ Մ. Աբեղյանի, շարականը «Սայլն» տաղի շարունակությունն է, իբրև Սիոնի որդիների երգ՝ սա հիմնավորվում է կերպարային ընդհանրությամբ՝ սերովբեների, քերովբեների առկայությունը, փառաբանական բնույթը, տաղը և շարականը միավորող «Փառք Քրիստոսի ամենազօր յարութեանն» կրկնակով: Մինչդեռ, ըստ Գ. Աբգարյանի, տաղը այլաբանական է, և առանձին երգ է: Իսկ «նույն տոնին նվիրված ԴԿ շարականում... առանց որևէ այլաբանության, պատկերվում են Քրիստոսի հարության ավետարանական մանրամասնությունները» (1, էջ 87): Ըստ Թահմիզյանի, շարականը գրվել է տաղից շուտ և պատկանում է Նարեկացու գրչին:



Ինչ վերաբերում է «Ընկալ քաղցրութեամբ» աղոթքին, ապա չթերագնահատելով նրա երաժշտական բաղադրիչի արժանիքները, ասենք, որ այն բաղկացած է ընդամենը մի քանի հնչյունների սաղմոսերգային շարադրությունից և իր տեսակով պարզապես տարբերվում է տաղերի անհատականացված, մեծակերտ մեղեդիներից:

Վերջիններիս վերաբերյալ Ռ. Աթայանը գրել է՝ «Հայկական տաղերի մեղեդիները, նրանց կատարելության և գեղեցկության, և նրանցում արտահայտվող տրամադրության խորության պատճառով, հաճախ համեմատում են Բախի և Ջենդելի վոկալ կամ նվագարանային արիանտերի հետ» (3, էջ 4):



Հաւուն, հաւուն

«Հաւուն, հաւուն»-ը Հարութեան տաղ է, գրված «Երգ երգոց»-ի այլաբանական լեզվով: Իր սիրասնունդ տատրակին կանչող աքաղաղը խորհրդանշում է Հիսուսին, իսկ տատրակը՝ հարսնուհու կերպարը՝ մարդկությանը: Զրիստոսը դարձի կոչ է անում, «հարսանեաց հրաւեր», որպեսզի մարդիկ ուտելով հացը (Հիսուսի մարմինը), խմելով գինին (իր արյունը) հաղորդվեն երկնային փեսայի հետ, որպեսզի հավիտենական կյանք ունենան:

«Մեղեդու առաջին՝ հնգյակային (կվինտա) թմիչքը, որը բխում է լուսնու-նից (պաուզայից), ուղղված է դեպի հեռու- հեռուները» (Թահմիզյան), և ոչ միայն տարածության մեջ, այլև ժամանակի մեջ՝ գալիք սերունդներին, ուղղված դեպի հավերժը:

«Ներքին ցնցող բնկումներից հետո ու դրանց դեռևս միացող հետքերը կրող մի լուսնուն, որից ծնվում է տաղը... ուրիշ բան չեն կարող լինել, քան «ողբերգության մատյանում» պատկերված տիպի սարսուռներ», - գրում է Ն. Թահմիզյանը, և պարզաբանում «Վերջինս պայմանավորված է լինում ստեղծագործության հղացմանը նախորդած հոգեկան ահագնալուր խռովների տեղատվությամբ» (1, էջ 204): Այս խորաթափանց դիտարկումը հիշեցնում է Ֆ. Նիցշեի խոստովանությունը՝ Ժ. Բիզեի «Կարմենի» առիթով. «Ես լսում եմ երաժշտության գոյացման պատճառները»: (4, էջ 529)

Տաղը ծավալվում է Դձ առաջին դարձվածքին մոտիկ ստեղատիպ ձայնեղանակում, «Կոմիտասն այն համարել է Դձ-ի (նրա հիշյալ դարձվածքի) և Ակ-ի խառնուրդ» (1, էջ 205):



Ահեղ ձայնս

Այս տաղի մեղեդին, ասես, բխում է երգչի ուժգին արտաշնչման ալիքի վրա ու հետզհետե մարում, ինչպես լեռան գագաթից պոկված ժայռաբեկոր, կամ մի ջրվեժ, որը բախվելով ժայռին անդրադառնում է ու կրկին վեր խոյանում, նվաղում «հանց թրթռուն արծաթե մի սյուն» (Ֆ. Նիցշե, «Ջրվեժը»): Հիրավի, մեղեդին հիշեցնում է առյուծի մոնյունը. առյուծ, որ մարմնավորում է դժոխքն ավերող, գերիներին ազատող Փրկչի կերպարը: Այս տաղը Ն. Թահմիզյանը բնորոշում է իբրև մի ավետիս՝ համայն մարդկությանը: Հիշողության մեջ այն արթնացնում է նաև Յո. Բրամսի 1-ին սիմֆոնիայի եզրափակիչ մասի գալարափողի «ավետիսը», որը ծագող արևի ճառագայթների պես իր հնչյունները սփռում է փրկագործված մարդկության վրա...

Աչքն ծով ի ծով

Եթե տաղի բանաստեղծական տեքստում Նարեկացին գեղանկարչի պես պատկերում է Տիրամոր գեղեցկությունը, ապա իր ելևէջներով վեհ, «մասիսաձև» մեղեդին արտահայտում է որդեկորույս մոր տառապանքների անդրադարձը պոետի սրտում: Այսպիսով, տաղը ամբողջացնում է Տիրամոր կերպարը. գեղեցիկ մարմնում՝ ողբերգական հոգի: Եվրոպական դասական արվեստում Մարիամի գեղեցկությունը, բերկրանքը, սովորաբար նկարագրվում էր “Ave Maria” կոչված երգերում, որոնք սկսվում են Գաբրիել հրեշտակի ողջույնով՝ Մարիամի հղիացման ավետիսով, իսկ Աստվածամոր տառապանքի մասին երգվում է “Stabat Mater” (կանգնած է մայրը խաչի դիմաց) կոչված ստեղծագործություններում:

Ի դեպ, Եվրոպայում առաջին “Stabat Mater”-ը ստեղծվել է 13-րդ դարի երկրորդ կեսին, այսինքն հայկական «Տիրամայրն» հայտնի տաղից մոտ 250 տարի հետո...

«Աչքն ծով ի ծով» տաղում Նարեկացին, ասես, միավորում է այս երկու ժանրերը. տաղի խոսքերը, կարծես մի “Ave Maria” է, իսկ մեղեդին՝ “Stabat Mater”:

Ահա այսպես, Նարեկացուն բնորոշ հակադրամիասնական հոգեվիճակը վառ կերպով դրսևորվում է նաև «Աչքն ծով ի ծով» տաղում:

Հիշենք «Մատեանը»՝ «Միևնույն սրտում՝ երկու զգացմունք...» կամ «Հաւիկ»-ի առավոտյան ցողի նման արցունքը և ահեղագոչ ձայնը՝ «գաբրիելեան փողոյն նման, աննման...»: Նարեկացու պատկերած Տիրամայրը գլխավորում է մարիամերգութեան համաշխարհային «մարգարտաշարը», որում շողշողում են Ռաֆայելի, Ջորջոնեի, Վ. Սուրենյանցի հանճարեղ «Մադոննաները»: Իր դրամատիզմով տաղը հիշեցնում է հատկապես, Դոնատելլոյի մարմարինոն բարելիեֆը, որը կտորված է և նորոգած, կարծես, քարն էլ ճեղքվել է Մարիամի արցունքից, և «այդ ճեղքն անցնում է նաև պոետի սրտի միջով» (Յ. Հայնե)...



Հաւիկ մի պայծառ տեսի



Հարության այս տաղի բանաստեղծական տեքստն, ասես, «Ահեղ ձայն» տաղի շարունակությունը լինի: Մի տարբերությամբ, որ «Հաւիկ» տաղում քրիստոսը հանդես է գալիս իբրև հավք, ինչպես «Հաւուն, հաւուն» տաղում՝ աքաղաղ, իսկ «Ահեղ ձայն» տաղի մեջ՝ ամյուծ: Ի դեպ, վերջինիս բովանդակությունը «տեղավորված» է «Հաւիկ»-ի 1-ին, 2-րդ տներում՝ Հիսուսը խաչի վրա ահեղ ձայնով գոչում է, իջնում և ավերում է դժոխքը: Մյուս տներում պատմվում է Հարության, աշակերտներին հայտնվելու, Համբարձման, երկրորդ գալստյան, Ահեղ դատաստանի, արդարներին պսակելու մասին: Այս երկու տաղերի գրական տեքստի ընդհանրությունը պայմանավորել է նաև մեղեդիների ընդհանրությունը՝ երկուսն էլ պոռթկումով են նվաճում գագաթնակետը, երկուսն էլ երգվում են «արտաշնչման ալիքի վրա», գահավիժում ու խաղաղվում ստորոտում: Այս տաղերն իրենց հերթին, իրենց վերջավորությամբ նման են «Հաւուն, հաւուն» տաղին: Վերջինս և «Սայլն» տաղը նման սկիզբ ունեն: Կարելի է նմանություն տեսնել մեղեդիների թռիչքների, մեծակերտության, գարդանախշերի և այլ տարրերի մեջ: Փաստորեն, բոլոր վեց տաղերի մեղեդիները, ասես, մի համաստեղություն են կազմում:

Այս հանգամանքը թույլ է տալիս մի համարձակ եզրակացության հանգել. գտնել տաղերի այնպիսի հաջորդականություն (կամ տարբերակներ)՝ լինի դա թե՛ գրական տեքստի և մեղեդիների կոնտրաստի, թե՛ ընդհանրությամբ փնջված մի ներդաշնակ ամբողջություն, այնուհետև այս մոնոդիաները բազմաձայնել, սիմֆոնիզացնել, շղթայել ինչպես Շուբերտի, Վագների, Մալերի երգերի շարքերը, Բրամսի՝ Աստվածաշնչյան հովերով համակված «Չորս խստաշունչ երգերը»: Ճիշտ է՝ սոնետների պսակի պես, վեց տաղ իրար հետևից կատարելը հասու կլինի միայն բարձրարվեստ երգիչներին, բայց հենց դա էլ կապահովի արժանի որակ այս սրբազան երգերին:

Վարդավառին

Այս տաղի վիճահարույց մեղեդին, հավանաբար, ստեղծվել է Նարեկացու ժամանակաշրջանում, կամ հորինված է իր տաղերի ոճով ու ոգով: Այդ մեղեդին հյուսված է ավանդական տարրերից. առաջին իսկ քայլը՝ մեծ սեկունդա ինտերվալը, հանդիպում ենք բազում հոգևոր և ժողովրդական երգերում: Այդպես են սկսվում «Անձինք նուիրեալք», «Սիրտ իմ սասանի», «Ու՞ր ես, մայր իմ», «Կռունկ» և այլ երգերը: Հիշյալ մեղեդիում հնչում են նաև դարձվածներ, հնչյունաբույլեր, որոնք շողշողում են նաև «Աչքն ծովի ծով», «Ամեն, Հայր Սուրբ» և այլ երգերում:


Եթե հետևելու լինենք «Վարդավառին» տաղում հերթագայող կերպարների «ուլունքաշարին», ապա կնկատենք հետևյալը. Գոհար վարդը «բռնկվում» է արեգակից, ու հրդեհում «ծաղկանց ծովը», ծառի ծաղիկն ու պտուղը, որը սնվում է սաղարթի խումն տերևներով, որոնց սոսափյունը նման է տավիղին, որով երգում էր Դավիթ սաղմոսերգուն: Ծաղկում են նաև «սոսն ու տոսախը», «նոճիներն ու արոսենին նորաբողբոջ շրշում են», գգվում վարդաշուշանին, շուշանը լցվում է «շող-շաղով և շար մարգարտով», այնուհետև.

Ծաղկունքդ ամեն շաղ առին,
 Շաղն յամպեն, յամպն յարեգակնեն.
Աստեղքդ ամեն շուրջ առին,
 Դեմ լուսնին գունդ-գունդ բոլորին:
Գունդ-գունդ խաչածև գնդակ,
 Յօրինուած երկկից շուրջանակ...





Եթե այս կերպարների շարանը (ինչպես այբուբենի տառերը և դրանց հնչումը) համապատասխանեցնենք երաժշտական հնչյուններին, ապա լսելի կդառնա տիեզերքի երգը, որն արձագանքում է և տաղի մեղեդիում: Գուևտավ Մալերն իր մեծակերտ 8-րդ սիմֆոնիայի մասին էր ասում. «Պատկերացրեք, որ տիեզերքը սկսում է հնչել և զոնգալ: Արդեն երգում են ոչ թե մարդկային ձայները, այլ պտտվող արևներ և մոլորակներ» (5, էջ. 254): Եթե այդ սիմֆոնիան «մակրոտիեզերքն» է, ապա տաղը՝ յուրօրինակ մի «միկրո տիեզերք» է:





Նարեկացու տաղերն ապրում են և ապրեցնում

Հայ կոմպոզիտորները իրենց արվեստում յուրովի կիրառել են, մշակել Նարեկացու տաղերը: Նարեկացու մեղեդին մյուռոնի մերանի պես շաղախվել է ու կյանքի կոչել նորանոր երկեր: Առաջինը Ալեքսանդր Փիրումովն էր, որ իր 2-րդ կվարտետում կիրառեց «Հաւիկ» տաղը, սակայն ոչ կրոնական նշանակությամբ, այլ իբրև զուտ երաժշտական շինանյութ (մոլեգնող անաստվածության ժամանակաշրջանում):

Էդգար Հովհաննիսյանի 1-ին սիմֆոնիան հիմնված է «Հաւիկ» տաղի մեղեդու վրա: Սկզբում այն խմորվում է ընդերքում, ինչպես հրահեղուկ, որը ժայթքում է 3-րդ մասում՝ «Հաւիկ»-ը ամբողջ հասակով վեր է խոյանում, հերոսաբար «արծվում» սիմֆոնիայի «երկնականարում»: «Հաւիկ» տաղը հայտնվում է նաև Լևոն Աստվածատրյանի նվագարանային «Պրոլոգ»-ում՝ պոլիֆոնիկ շարադրությամբ:

Հայտնի են և Սերգեյ Աղաջանյանի «Պոլիմոնոդիա»-ները՝ մեկում «Հաւուն, հաւուն» տաղն է ճյուղավորվում, ինչպես խաչքարի զարդանախշերը, մյուսում «Հաւիկ»-ը:

Վերջինիս մեջ մեղեդու վերելքը լարային նվագախմբի ընդերքից մինչև վերին ռեգիստրները խորհրդանշում է Հարության գաղափարը: Ա. Փիրումովի, Լ. Աստվածատրյանի, Է. Հովհաննիսյանի ստեղծագործություններում տաղի մեղեդին տրոհվում է ու շաղախվում ընդհանուր հյուսվածքին, իսկ Աղաջանյանը պահպանում է տաղերի հնչյունների բարձրությունները, սակայն տևողություններն են փոփոխվում, այնպես որ ստացվում է մի յուրատեսակ կանոն:

Ռոբերտ Աթայանը ձայնի և դաշնամուրի համար մշակել է «Հաւուն, հաւուն», «Հաւիկ», «Սայլն», «Ես ձայն գառնիւծուն ասեմ» («Ահեղ ձայնս») տաղերը, որոնց նվագակցությունը ակորդային-հոմոֆոնիկ է: Որոշ երաժշտագետներ նշում են հարմոնիաների եվրոպական երանգը, մինչդեռ «Հաւուն»-ի «դիտելով զհեթանոսս» հատվածում հայկականի և եվրոպականի հակադրամիասնությունը, մաժորա-մինոր խաղիկները, խորհրդավոր հարմոնիաները երգին հաղորդում են համապարփակ հնչողություն: Ընդ որում, տաղերի մեղեդիները հնչում են ամբողջական և անփոփոխ: Նույնը և Վարդ Մանուկյանի «Հաւիկ»-ում, որը նույնպես գրված է ձայնի և դաշնամուրի համար, նվագակցությունը նմանակում է եկեղեցական զանգերի ղողանջներին: Տաղերի հետ ավելի ազատ է վարվել Երվանդ Երկանյանը՝ բացի «Ահեղ ձայնս» տաղից, նա մշակել է մնացած չորսը, վոկալ և նվագարանային իրենց տարբերակներով: Ի դեպ, «Հաւիկ», «Հաւուն, հաւուն», «Ահեղ ձայնս» տաղերը, «Շարական»-ը բազ-

մաճայնվել են նաև տողերիս հեղինակի կողմից՝ ձայնի և նվագարանների համար, ձայնագրվել Ազգային ռադիոյի ֆոնդի համար և հաղորդվել հեռուստատեսությամբ՝ Գևորգ Զունանյանի մեներգությամբ: Իսկ «Հաւիկ»-ը Գ. Զունանյանը ձայնագրել է նաև ջութակով, և նվագը չի գիջում երգին: Ամմոռանալի է նաև Լուսինե Չաքարյանի «Հաւուն, հաւուն»-ը՝ «Շարական» համույթի նվագակցությամբ (Կոմիտասի անվան համերգասրահում): Կոմպոզիտորների այս «հոգևոր ընտանիքում» իր խոսքն է ասել նաև Տիգրան Մանսուրյանը, որի «Հաւիկ»-ը կատարվել է 1998 թվականին՝ Նորվեգիայում: Ալտի մենանվագը՝ Զիմ Զաշքաշյան (Գերմանիա), հարվածայինները՝ Ռոբին Շուկովսկի (Նյու Յորք): Տողերիս հեղինակի հետ զրույցում Տիգրան Մանսուրյանը նշել է, թե որքան էլ տարբեր լինեն «Հաւիկ» տաղի մեկնություններն ու կերպարանափոխությունները մշակողների կողմից, չպետք է հեռանալ գլխավոր գաղափարից, այն է՝ Հարությունը... Այս երաժշտության չորս բոլորակներն իր մեջ, ասես, տեղավորում է մի ամբողջ հավերժություն: Տաղի մեղեդին նոտագրել է ինքը՝ Մանսուրյանը՝ Կոմիտասի սկավառակից, առավել ճշգրտելով ելևէջները՝ ընդհուպ մինչև քառորդ տոներ: Մեղեդին ծավալվում է անփոփոխ, վիբրաֆոնի ճախրող, վերընձյուղվող հնչյունների «խնկարկումով» պարուրված, որոնք խորհրդանշում են Հիսուսի Հարությունը և մարդկության փրկությունը...

Դանիել Երաժիշտ

Օգտագործված գրականություն

1. Холопова В, Чигарёва Е., "Альфред Шнитке" М., 1990
2. Լ. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ., Եր., 1985
3. Հայ միջնադարյան տաղեր, մշակ.՝ Ռ. Աթայանի, Եր., 1972
4. Ф. Ницше, Сочинения в двух томах, т.2, М., 1990
5. И. Барсова, Симфонии Густава Малера, М., 1975





Տաղ ՅարուԹեան

Սայլն այն իջաներ ի լեռնէն ի Մասեաց,
Եւ ի վերայ Նորա՝ աթոռ ոսկեղէն,
Եւ ի վերայ Նորա՝ բեհեզ ծիրանի,
Եւ ի վերայ Նորա՝ Որդի արքայի,
Եւ յաջմէ Նորա՝ վեցթւեան սերովբեքն,
Յահեկէ Նորա՝ բազմաչեայ քերովբեքն,
Առաջի Նորա՝ մանկունք գեղեցիկ,
Ի գիրկս Նոցա՝ սաղմոսարան և քնար,
Ի ձեռս Նոցա՝ խաչն փրկչական,
Որք երգէին և ասէին.

—Փա՛ռքք Զրիստոսի ամենազօր յարուԹեան:

Ածեա՛ր էն, ածեա՛ր,
Չսայլիկն ածեա՛ր էն, կացուցեալ.
Ի Մասեաց յաջ կողմանէն
Չսայլիկն ածեա՛ր էն, կացուցեալ.
Եւ ահա չչարժեր սայլիկն այն,
Եւ ահա չխաղայր անիւն այն:



Եթէ հարիւր բարդ խորձան, վեց կորնկան,
Մին մանուշակ՝ խրձադիզեալ,
Ի Մասեաց յաջ կողմանէն
Չսայիկն ածեալ են, կացուցեալ.
Եւ ահա չշարժեր սայիկն այն,
Եւ ահա չխաղայր անիւն այն:

Եթէ եզինքն են սաթ ու սպիտակ,
Ծաղկախայտուցք, արագաքայք, ընթացականք,
Եղջիւրք իւրեանց՝ խաչանման,
Եւ մազն ամեն՝ հոյլ մարգարիտ.
Եւ ահա չշարժեր սայիկն այն,
Եւ ահա չխաղայր անիւն այն:

Եթէ սամիքն են արծաթի, լուծն է ոսկի,
Եւ սամոտիքն՝ ապրիշիմի,
Փոկեն՝ ի կերպասոյ հիւսեալ,
Եւ խարազանն՝ փնջեալ ծաղիկ.
Եւ ահա չշարժեր սայիկն այն,
Եւ ահա չխաղայր անիւն այն:





Այն ճորտն ճոճ էր և ճապուկ,
Ուռամիջակ, հաստաբազուկ,
Լայնաթիկունք, խարտիշագեղ, ահեղագոչ.
Նա ձայն ածեր եզևամուխն,
Կանչիւն առներ աթոռակին,
Դարձեալ խաղայր եզևամուխն,
Խաղայր, ցնծայր աթոռակին.
Եւ ահա շարժէր սայլիկն այն,
Եւ ահա խաղայր անիւն այն:

Ի յառեղէն առեալ շարժումն գունդն սայլին,
Այսօր անուշահոտ բուրմամբ ընթանայ:
Սայլն ի Սինեայ
Երկրորդ օրէնքն է Մովսէսի.
Եւ այն հարիւր բարդ խոյրձանն՝
Այն նահապետքն են, մարգարէք.
Եւ այն վեց բարդ կորնկանն՝
Վեցօրեայ գործքն Աստուծոյ.
Եւ այն մինն մանուշակ՝
Միաւորեալ Երրորդութիւն.

Եւ այն մանուկ խարտիշագեղն՝
Այն կարապետն է Յովհաննէս.
Եւ այն չորս գունդն սայլին՝
Աւետարանն է Զրիստոսի:



Ի գիւ գայր, ի գիւ, սայլիկն ի գիւ.
Ի Մասեաց յաջ կողմանէն
Սայլիկն ի գիւ գայր, ի գիւ,
Եւ ճնչալով գայր մտանէր յԵրուսաղէմ.
Եւ որդիք Նոր Սիոնի,
Նոր երգէին՝ զայս ասելով.
—Փա՛ռքք Զրիստոսի ամենազօր յարուբեան:

Տաղ Հարուժյան

Փահռք Զրիստոսի ամենագոր հարուժյան:
Սայլն այն իջնում էր Մասիս լեռն ի վայր,
Եվ նրա վրա աթոռներ կային կարգով շարեշար,
Եվ նրա վրա գահույք ոսկեղեն,
Եվ նրա վրա բեհեզ ծիրանի,
Եվ նրա վրա որդին արքայի.
Աջից վեցթևյան սերովբեներն են,
Ձախից՝ բազմաչյա քերովբեներն են,
Առջևում նրա՝ մանկուք գեղեցիկ,
Գրկերում նրանց՝ խաչ տերունական,
Ձեռքերում՝ քնար ու սաղմոսարան,
Որ երգելով ասում էին.
Փահռք Զրիստոսի ամենագոր հարուժյան:



Բերել են, բերել են սայլիկը,
Բերել են կանգնեցրել.
Եվ ահա չէր շարժվում սայլիկն այն,
Եվ ահա չէր խաղում անիվն այն:



Վրան հարյուր բարդ խոլորձան, վեց՝ կորնկան,
Մի՛ մանուշակ խրձադիզած՝
Սայիկը աջ կողմից Մասյաց
Բերել են ու կանգնեցրել.
Եվ ահա չէր շարժվում սայիկն այն,
Եվ ահա չէր խաղում անիվն այն:

Սամիներըն՝ արծաթից են, լուծը՝ ոսկուց,
Սամոտիներն՝ ապրշումից.
Շարանման վրան շարված
Փոկերն են հույլ մարգարտահուռ, Խարազանը՝ փնջված ծաղիկ.
Եվ ահա չէր շարժվում սայիկն այն,
Եվ ահա չէր խաղում անիվն այն:

Ճկուն էր ճորտն այն ու ճապուկ,
Դալարամեջք, հաստաբազուկ,
Լայնաթիկունք, խարտիշագեղ, ահեղագոչ.
Նա ձայնում էր եզևամոլին,
Խայտում, ցնծում ու կանչում էր աթոռակին:

Եզներն էին սաթ ու սպիտակ,
Ճաղկախայտուց, քաջընթացիկ, արագաքայլ,
Եղջույրները՝ խաչանման,
Իսկ մազերը՝ հույլ մարգարիտ.
Եվ ահա շարժվում էր սայլիկն այն,
Եվ ահա խաղում էր անիվն այն,
Օրորելով կուրծն առեղին՝
Ընթանում էր անուշ բուրմամբ:

Սայլն Մովսեսի երկրորդ օրենքն էր Սինայում.
Այն հարյուր բարդ խուրձանը՝
Նահապետներ, մարգարեններ,
Կորնկանը վեցը բարդոց՝
Տիրոջ գործերը վեցօրյա,
Մանուշակն այն մի բարդոցով՝
Միավորյալ Երրորդություն,
Այն մանուկը խարտիշագեղ
Սուրբ Հովհաննեսն էր Մկրտիչ,
Իսկ սայլիկի չորս կրծերը՝
Ավետարանը Զրիստոսի:



Գիւ գալիս Էր գլգլալեն սայլիկն ի գիւ,
Գալիս Էր աջ կողմից Մասյաց,
Սայլիկն ի գիւ գալիս Էր գիւ գլգլալեն
Ու մտնում Էր ճնռչալով Երուսաղէմ
Իսկ որդիները Սիոնի
Երգում էին այս ասելով.
Փա՛րք Զրիստոսի ամենագոր հարուրթյան:

Թարգմ.՝ Վազգէն Գևորգյանի



Մեղեդի Ճննդեան

Աչքն ծո՛վ ի ծո՛վ ծիծաղախիտ ծաւալանայր յառաւօտուն՝
Երկու փայլակնաձև արեգական նման.

Շողն ի ժմին իջեալ յառաւօտէ լոյս:

Վարսիցն երամից զարդ, երամից զարդ

Ոլորս են առեալ եռահիւսական բոլորեալ այտիւք:

Յայտեն նռնենի գեղաշիտակ ծայրից ծաղկանց,

Որոյ սիւնն ի սրտին նուսխայօրէն կարկաջայր:

Ձեռացն եղիշոյ սարդիատունկ կամարակապ կապեր,

Ատիճա՛ղ-պատիճա՛ղ ստղի-խտղի երգով.

Յոսեր զելևելսն ընդ միմեանս.

Յանդարտիկ խաղայր, թիկնէթեկին ճեմեր:

Բերանն երկթերթի, վարդն ի շրթաց կաթեր,

Լեզուին շարժողին քաղցրերգանայր տաւիղն:

Ծոցն լուսափայլ կարմիր վարդով լցեալ,

Ծղիքն ծիրանի՝ մանուշակի հոյլք.

Խնկեալ ի կնդրկէ բուրուառ՝ հրով աստուածայնով լցեալ,

Ձայն քաղցրանուագ, որ ի նմանէ հնչեր:

Գեղեցիկ պատմութեանս զարդարեալ էր,

Ի կապուտոյ, ի ծիրանոյ, ի բեհեզոյ, ի յորդանէ.





Գօտին՝ արծաթափայլ, ոսկետտուն, կամարակապ յականց,
Յականց շափիւղայ մանրամասին յօրինուածով պճնեալ:
Անձինն ի շարժել մարգարտափայլ գեղով,
Ոտիցն ի գնալ՝ շողն ի կաթիլ առնոյր:
Այն թագաւորին, այն նորածին Փրկչին՝
Չքեզ պսակողին, փա՛ռք յաւիտեանս. ամէն:


Մեղեդի Ծննդյան

Ծավալվել են աչքերը ծով
Առավոտվա ծովի վրա ծիծաղախիտ,
Ինչպես երկու փայլակնաձև արեգակներ
Շողն է նման լուսացնցող այգաբացի:

Թափվում էին այտերից՝ վառ
Դափնեվարդի ու նռնենու ծաղկաթերթեր.
Գեղաշիտակ իրանից սիրտն էր կարկաչում
Յուզավարար կենսատու սեր:

Կամար կապած թևերը գիրգ՝
Երգում էր նա ախորժալուր ու գեղգեղուն,
Ելևեջներն հյուսում իրար.
Շարժվում հանդարտ ու ճմուռն էր թիկներթեկին:

Բերանն երկթերթ, շրթունքներից վարդն էր կաթում.
Լեզվի տավիղն էր քաղցրերգում հուզումնահորդ.
Շողում էին նույն կենսավառ
Սիրով չքնաղ ու գինեթույր
Ծամերն իրենց գիսակներով խոպոպավոր:



Այդ վարսերը համերամ զարդ, համորեն զարդ,
Ոլորք առած եռահյուսակ՝
Բոլորվել են այտերի շուրջ.
Լուսափայլ է ծոցը, կարմիր վարդով լցված,
Դաստակներն են մանուշակի ծիրանի փունջ:



Բուրում էր նա կնդրուկի պես
Աստվածային հրով լցված մի բուրվառի.
Ձայնն էր մեղուշ, քաղցրանվազ:

Չարդարված էր պատմունճանով գեղեցկատես,
Որ բեհեզի կապույտ, որդան ու ծիրանի
Գույներով էր ոսկեշողում.
Գոտին կամար, արծաթափայլ,
Ոսկետտունն ու նրբակերտ՝
Պաճուճված էր ակնեղենով շափյուղայի:

Երբ շարժվում էր մարգարտափայլ գեղեցկությամբ,
Քայլերի հետ շողն էր կաթում իր ոտերից:

Քեզ պսակող թագավորին
Ու նորածին այն փրկչին փա՛ռք
Հավիտյանս հավիտենից. ամեն:

Թարգմ.՝ Կազգեն Գևորգյանի



Տաղ Սուրբ Խաչին

Ի յԵրուսաղէմ գընամ,
Ի յայն աստուածաշէն քաղաքն,
Ի յայն գեղեցկաշէն տաճարն,
Ի յայն շուշանի նման Սիոնն:
Աննըմանին ո՞վ նըման.
Աննըմա՛ն:

Հաւիկ մի պայծառ կացեալ
Ի յայն խաչաթևին վերայ,
Թևս արծաթածալ ունէր
Արեգական շողոյն նըման.
Աննըմանին ո՞վ նըման.
Աննըմա՛ն:

Չճայնիկն ողորմիկ ածեր՝
Գաբրիէլեան փողոյն նըման,
Չաչերն արտասուօք լընոյր՝
Առաւօտուն ցօղոյն նըման:
Աննըմանին ո՞վ նըման.
Աննըմա՛ն:



—Ա՛յ գեղեցկագեղ հաւիկ,
Որ նստիս յայտ խաչաթևիդ վերայ,
Չծայնիկդ ընդէ՛ր ողորմիկ ածես՝
Գաբրիելեան փողոյն նըման,
Չաչերդ արտասուօք է՛ր լնուս՝
Առաւօտուն ցօղոյն նըման:
Աննըմանին ո՛վ նըման.
Աննըման:

Ա՛յ գեղեցիկ հաւիկ,
Առ քեզ են աւետեաց հրաւերս,
Դու սեզ խաղի առեալ ցնծա՛:
Աննըման:



Տաղ Յարութեան

Հաւո՛ւն, հաւո՛ւն արթնացեալ, դիտելով զհեթանոսս,
Ձայնէ՛ր, ձայնէ՛ր, տատրակին, սիրասնունդ սիրելոյն.
—Դարծի՛ր, դարծի՛ր սոմնացիդ ընդ վիմին հովանեաւ,
Ե՛կ, հարսնուհիդ ի լերանց ընծուց, ի դաշտաց այծեմանց:
Եկեա՛լ, եկեա՛լ տաւաղին յԵփրայիմ Բեթելին,
Ելեա՛լ, ելեա՛լ յասպարեզս ի յայգին Կեդրոնի.
Հնձա՛ն, հնձա՛ն կոխելով գոյն ի գոյն բոսորի,
Արկեա՛լ, արկեա՛լ փայտի հաց ըզգգնելիս իւր զենեալ.
Խառնեա՛լ, խառնեա՛լ ի գինի գխառնելիս անուշից,
Բաժա՛կ, բաժա՛կ մատուցաւ ի հրաւեր հարսանեաց.
Հրաւէ՛ր, հրաւէ՛ր հարսանեաց. Եկայք նոր ժողովուրդք,
Կերայք, կերայք յիմ հացես և արբեք զիմ գինիս,
Չի կեցջիք յանըսպառ յանվախճան յաւիտեան:



Մեղեդի Հարուրայան

Հավիկն, հավիկն արթնացած
Հեթանոսներ տեսելով՝
Ձայնեց, ձայնեց տատրակին՝
Սիրասունդ սիրելուն.

— Դարձիր, դարձիր, սոմաացի՞դ. Հովանու տակ այն ժայռի.
Ե՛կ, հարսնուհի՞դ, լեռներից ինձերի ու
Այծյամների դաշտերից:

Գալիս, գալիս են խմբվում
Եփրայիմում, Բեթելում,
Ելնում, ելնում ասպարեզ՝
Այգեստանում Կեդրոնի:

Հաց է պատրաստել,
Մորթել է զոհն իր,
Հնձանել գինի,
Շառագույն, բոսոր,
Խառնել է գինուն
Անուշ համեմունք:



Բաժակ մատուցվեց
Ի կոչ հարսանյաց,
Կոչո՛ւնք հարսանյաց.
— Եկե՛ք, ժողովո՛ւրդ,
Կերե՛ք իմ հացից.
Ըմպե՛ք իմ գինին,
Որպեսզի ապրեք
Հավետ անվախճան:



Թարգմ.՝ Կազգեն Գևորգյանի

Տաղ Սուրբ Խաչին

Ես ձայն գառիւծուն ասեմ,
Որ գոչեր ի քառաթևին.
Ի քառաթևին գոչեր,
Ձայն առներ ի սանդարամետս.
Սանդարամետն այն ի դող եղեալ,
Սասանիւր ի ձայնէն ահեղ.
Ահեղ ձայնս, որ ես լուայ,
Սա քակէ գամուրս, որ ունիմ.
Չամուրս իմ քակել կամի,
Գերելոցն առնել գերեդարծ.
Գերեացն երանի ասեմ,
Որ եղեն ի յառն առիւծուն.
Ի յառն առիւծուն եղեն,
Այլ չունին ակըն տանջելոյ.
Ակըն տանջելոյ չունին,
Ակն ունին անանց պըսակին.
Պըսակ բոլորեալ առնուն,
Յառիւծէն՝ յանմահ արքայէն.
Փա՛ռըս Փրկողին տացուք,
Որ փրկեաց զգերեալսն ի բանտէն:



Տաղ Խաչի Վերացման

Այն առյուծի ճայնն եմ ասում.
Որ գոչում էր քառաթևին,
Քառաթևին գոչում էր ու
Ձայն էր տալիս սանդարամետ.
Սանդարամետը դողահար՝
Սասանվում էի ահեղ ճայնից:

Ահեղ ճայնն այն, որ լսեցի,
Քանդում էր իմ ամրոցները.
Ամրոցներս է ուզում քանդել,
Գերյալներին գերեդարձել:



Փահք տանք փրկչին, որ ազատեց
Գերյալներին խավար բանտից:

Երանի՛ այն գերիներին,
Որ առյուծին ավար եղան,
Ավար եղան այն առյուծին.
Այլևս չունեն տանջանքի վախ,
Տանջանքի վախ չունեն այլևս,
Անանց պսակ են սպասում
Ու կստանան հյուսված պսակ
Անմահ արքա այն առյուծից:

Թարգմ.՝ Վազգեն Գևորգյանի



Տաղ Վարդավառին

Գոհար վարդըն վառ առեալ
Ի վեհից վարսիցն արփենից.
Ի վեր ի վերայ վարսից
Ծաւալէր ծաղիկ ծովային:
Ի համատարած ծովէն
Պղպշեր գոյնըն այն ծաղկին.
Երփին երփնունակ ծաղկին,
Շողշողեր պտուղն ի ճղին:
Քրքում վակասիր պտուղն,
Սնաներ խումըն տերևով.
Տերևն տաւիղ տուողին,
Չոր երգեր Դաւիթ հրաշային:
Ի փունջ խումներամ վարդից
Գոյնզգոյն ծաղկունք ծաղկեցան,
Այդ սօս ու տօսախ ծառերդ
Վարդագոյն ոստս արձակեցին:
Այդ նոճ ու բողբոջ ասրօսդ
Չարդ առեալ վարդըն շուշանին.
Շուշանըն շողեր հովտին,
Շողշողեր դէմ արեգականս:



Այն հիւսիսային հաւէն
 Հով հարեալ գոհար շուշանին:
Յայն հարաւային լեռնէն
 Քաղցր օդով ցօղէր շուշանին:
Շուշանըն շաղով լցեալ,
 Շող շաղով և շար մարգարտով.
Ծաղկունքդ ամէն շաղ առին,
 Շաղն՝ յամպէն, ամպն՝ յարեգակնէն:
Աստղունքդ ամէն շուրջ առին
 Դեմ լուսնին գունդ-գունդ բլուրիին.
Գունդ-գունդ խաչաձև գնդակ,
 Յօրինուած երկնից շրջանակ:
Փա՛ռք Հօր և Որդւոյն յաւէտ,
 Սուրբ Հոգւոյն այժմ և յաւիտեանս:



Տաղ Վարդավառի

Գոհար վարդն էր շղարշ առել
Արփիական վեհ վարսերից.
Ծավալվում էր հուսկ վերևում, վարսերից վեր,
Ծաղկածիծաղ ծովն երկնային:

Եվ այդ ծովից համատարած
Պղպջում էր գույնն այն ծաղկի երփնափողփող.
Իսկ ճյուղերին հուրհրատում էին հասած
Պտուղները քրքումնաթույր:

Հուրհրատում էին նրանք սիրասնունդ
Հովանու տակ խուռն ու առատ տերևների.
Որ ստավում էին ինչպես հրաշալի
Դավթի տավիղն աստվածատուր:

Վարդաստանն էր շողարձակում հազարերանգ
Ծիծաղածուկի ծաղիկների երփնախաղով.
Սոսն ու տոսախն էին սփռել այնտեղ բոսոր
Դալարագեղ ոստերն իրենց:



Նոճիներն ու արոսենին նորաբողբոջ
Շրջում էին՝ հեքով հուշիկ
Գգվելով վարդ ու շուշանին.
Շողշողում էր շուշանն հովտում.
Շողում էր դեմն արեգակի:

Հյուսիսային հովն հեգասահ
Հովհարում էր գիրգ շուշանին.
Հարավային լեռների գով
Օղն էր ցողում ջինջ շուշանին:

Ու շուշանն էր լցվում շաղով,
Շող շաղով ու շար մարգարտով.
Արեգնափայլ ոսկի ամպից
Շաղն է ցողում ծաղկունքն ամբողջ:



Նշմարվեցին հետզհետե
Աստղերն առկայծ ու դարձդարձիկ,
Լուսինն առան բույլերի մեջ
Ու երկնքի բիլ կամարին համատարած
Հոծ խմբերով շուրջանակի ճառագեցին:

Փանջ Հոր, Որդուն և սուրբ Հոգուն
Այժմ և միշտ հավիտյանս հավիտենից:

Թարգմ.՝ Վազգեն Գևորգյանի



Շարական

Փա՛ռք Զրիստոսի ամենագոր յարութեանն:
Զրիստոսի ամենագոր յարութեանն
Երկրպագեն քերովբէքն,
Եւ վեցթևեան սերովբէքն
Հոգևորական հնչմամբ երգեն՝ ասելով.
-Փա՛ռք Զրիստոսի ամենագոր յարութեանն:

Այսօր անուշահոտ բուրմամբ ընթանային սուրբ կանայքն,
Տեսանելով զհրեշտակն արեգակնակերպ փայլմամբ,
Ի վերայ վիմին գոչէր՝ ասելով.
-Փա՛ռք Զրիստոսի ամենագոր յարութեանն:

Այսօր արձակեցաք ի կապանաց նախահօրն
Եւ վերստին նորոգմամբ
Յաւիտենական կենացն եղաք ժառանգորոք.
- Փա՛ռք Զրիստոսի ամենագոր յարութեանն:





Սայլն այն իջաներ

Չափավոր ծանր

Փառք քիս - տո -

5 սի ա - մե 3 նա - զօր

9 յա - թու - - - թեան:

13 Չափավոր միջակ

Սայլն այն ի-ջա-ներ

16 ի լեռ - նին ի Սա - - - սեաց

19

1 - 4. եւ	ի	վե -	րայ	Տ	-	-	-	-	րա
5. եւ	յաջ	մե	-	Տ	-	-	-	-	րա
6. Յա	-	հե -	կէ	Տ	-	-	-	-	րա
7. Ա	-	ռա -	օի	Տ	-	-	-	-	րա
8. Ի	Գիլ	-	կոս	Տ	-	-	-	-	րա
9. Ի	ծե	-	ռին	Տ	-	-	-	-	ցա
				Տ	-	-	-	-	ցա

23

1. ա	-	թոռք	են	կար	-	-	-	գեալ.
2. Գա	-	հոլք	ոս	կե	-	-	-	դէնք.
3. բե	-	հեգք	ծի	րա	-	-	-	Գիք.
4. որ	-	դի	ալի	քա	-	-	-	յի.
5. վեց	-	թեւեան	սե	րով	-	-	-	բէքն.
6. բազ	-	մաչեայ	թե	րով	-	-	-	բէքն.
7. ման	-	կունք	գե	ղե	-	-	-	ցիկ.
8. խաչ	-	տէ	րու	ճա	-	-	-	կան.
9. սաղ	-	մո	սարան	եւ	-	-	-	քնար.



26
Որք եր - - - գե - - - ին

30
ել ա - սէ - - - ին.

34 **Ծանր**
Փառք Քրիստոս - - -

38
սի ա - մե 3 - նա - գոր

42
յա - ռու - թեան:



Այբն ծով ի ծով

Lento

ըստ Մ. Եկմապյանի

Musical notation for the first line of the song. The melody is written on a treble clef staff with a key signature of three flats (B-flat, E-flat, A-flat) and a common time signature (C). The lyrics "Ա - չ - ք - ը - ն ծ - օ - Վ" are placed below the notes.

Musical notation for the second line of the song, starting at measure 6. The melody continues on the treble clef staff. The lyrics "վ ի ծ - օ - Վ" are placed below the notes.

Musical notation for the third line of the song, starting at measure 11. The melody features a complex rhythmic pattern with sixteenth notes. The lyrics "վ ծ - օ - Վ" are placed below the notes.

Musical notation for the fourth line of the song, starting at measure 16. The melody continues with a similar complex rhythmic pattern. There are no lyrics for this line.

20

ὄω - ηω ιη

26

ιη ὄω - ιω

31

ιω 6

35

ιω 6

38

նա

42

յո յա - նա

46

ւօ տու

51

ն Ե - թ - կու փա -

55

յ - լա կ - նա

60

ըն

65

ա - րե

69

գա

73

կա - - - ն նը

77

մա - - - ն:




Հաւիկ

Ծանր

mf
Հա-ւիկ մի պայ -
4
ծառ ստե - - - -
8
սի Ան - - - -
13
16
նը-ման:
19
Ան-ըն - մա - նի ո՛վ,

24




n̄վ,

n̄վ, *p*

n̄վ,

Musical staff 24: Treble clef, 2/4 time signature. The staff contains a melodic line with eighth and sixteenth notes. There are three measures with lyrics 'n̄վ,' below them. A dynamic marking 'p' is placed under the second measure.

29



նը - ման,

n̄վ,

Musical staff 29: Treble clef, 2/4 time signature. The staff contains a melodic line with eighth and sixteenth notes. There are two measures with lyrics 'նը - ման,' below them. A dynamic marking 'p' is placed under the first measure.

32




p

n̄վ,

նը - ման:

Musical staff 32: Treble clef, 2/4 time signature. The staff contains a melodic line with eighth and sixteenth notes. There are two measures with lyrics 'նը - ման:' below them. A dynamic marking 'p' is placed under the first measure.

37



ւն

նը - ման:

Musical staff 37: Treble clef, 2/4 time signature. The staff contains a melodic line with eighth and sixteenth notes. There are two measures with lyrics 'նը - ման:' below them.



Հաւուն-հաւուն

Ծանր

Հաւուն հաւուն

3
ուն արթնա

5
ցեալ դիտե

7
լով զիտե - բաւս:

The musical score is written on a single treble clef staff with a key signature of one flat (B-flat) and a 3/4 time signature. It consists of four lines of music. The first line starts with a treble clef and a key signature of one flat. The second line begins with a '3' indicating a triplet. The third line begins with a '5' indicating a quintuplet. The fourth line begins with a '7' indicating a septuplet. The lyrics are written in Armenian and are aligned with the notes of the melody. The lyrics are: Հաւուն հաւուն, 3 ւն արթնա, 5 ցեալ դիտե, 7 ւով զիտե - բաւս:



Ահեղ ձայնս

Ծանր




Ա - հեղ _____ ձայ - նըս,

3



որ ես լը - - - ուայ

5



սա քա - կի գա-մուրս,

7



որ ու - - - - - 5
նիմ:

Գոհար Վարդն

Գովական, սերտ



Գոհար - - - - -

4 հար - - - - -

7 - - - - -

10 վար - - - - -

13 րդն վար



25

ոնալ

28

ի վե -

31

հից վար - - -

34

սի - - - - - ցն

37

ար - - - - - վե

39

մից: 3

Շարական

Չափավոր-միջակ

Ա. Բ. Գ. -----

♩

Փա - ռըք Քրիս - տո - սի ա - մեն - նա - զօր յա - ռու - թեան:

6

Քրիս-տո-սի ա - մեն - նա - զօր յա - ռու - թեանն եր - կըր - պա - զեն քե -

10

րօ - բէք և վեց թել - եան սե - րօ - բէքն հո-գե - տ - րա - կան հընչ - մամբ եր - զեն


15

Dal segno

♩


ա - սե - լով: Այ - սօր ա - նու - շա - հոտ բուր - մամբ ըն - թա - նա -

19



յին սուրբ կա - նայքն, տե - սա - նե - լով ըզ - հրեշ-տակն ա - ռե - գակ - նա -

23




կերպ փայլ-մամբ ի վե - ռայ վի - մին գո - չէր ա - սե - լով: Այ - սոր ար -

28



ծա - կե - ցաք ի կա - պա - նաց նա - խա - հօրն. և վե - ռըս-տին նո -

32



րոզ - մամբ յա - Վի-տե - նա - կան կե - նացն ե - ղաք ժա - ռան - գորոք:



Գրիգոր Նարեկացի «Տաղեր», 2018թ.

Երգերի բազմաձայնումը՝ Դանիել Երաժիշտի
Երգերը կատարում են՝

Գևորգ Հունանյան (տենոր)



Սայլն այն իջաներ
Աչքն ծով ի ծով (Մ. Եկմայան)
Հաւիկ մի պայծառ տեսի
Հաւո՛ւն, հաւո՛ւն
Շարական

Աննա Մայիլյան (սոպրանո)

Գոհար վարդն
Ահեղ ձայնս

Հրատարակության խորհրդատու՝ Դանիել Երաժիշտ
Մանրանկարիչ՝ Լիլիթ Վարդումյան
Համակարգչային շարվածք և ձևավորում՝ Կարինե Մակարտիչյան
Սրբագրիչ՝ Մարինե Հարությունյան
Խմբագիր՝ Լիլիթ Վարդումյան
Գործադիր պրոդյուսեր՝ Նարեկ Հարությունյան
Հատուկ շնորհակալություն Աննա Մայիլյանին և Գևորգ Հունանյանին



©«Նարեկացի» արվեստի միություն, 2018

